Կրիպտոակտիվների ոլորտը կարգավորող նախագծի վերաբերյալ դիտարկումներ ներկայացնելու մասին

25.11.2026

Կենտրոնական բանկը շարունակում է «Կրիպտոակտիվների մասին» օրենքի, ինչպես «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի կիրարկման համար անհրաժեշտ կարգավորումների հանրային քննարկման գործընթացը։

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված ֆինանսական հաստատությունների կողմից կրիպտոակտիվով գործարքների առնչությամբ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ներկայացման կարգը և ժամկետները» որոշման :

Նախագիծը մշակել է Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնը՝ հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը։

Նախագծով սահմանվում են կրիպտոակտիվով գործարքների առնչությամբ պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման ձևը, կարգը և ժամկետները։

Նախագծի ընդունմամբ՝

- կրիպտոակտիվներով գործարքների վերաբերյալ հաշվետվությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոնին կտրամադրվեն մեկ միասնական ձևով՝ հաշվի առնելով կրիպտոակտիվներով գործարքներին բնորոշ կետերը բոլոր ֆինանսական հաստատություններին միասնական ձևով հասանելի դարձնելու անհրաժեշտությունը,

- Նախագծով սահմանված կրիպտոակտիվով ծառայություններ մատուցող անձինք Ֆինանսական դիտարկումների կենտրոնին կտրամադրեն 5 միլիոն

դրամին հավասար կամ գերազանցող կրիպտոակտիվով (այդ թվում՝ արժեթղթերի կամ ածանցյալ ֆինանսական գործիքների սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվով) գործարքների վերաբերյալ հաշվետվություններ,

ֆինանսական հաստատությունները Ֆինանսական դիտարկումների կենտրոնին կտրամադրեն սեփական կարիքների համար կատարվող կրիպտոակտիվով գործարքների վերաբերյալ հաշվետվություններ, եթե գործարքի գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը։

Հրավիրում ենք բոլոր շահագրգիռ անձանց Նախագծի վերաբերյալ իրենց դիտարկումներն ու առաջարկությունները ներկայացնել մինչև ս.թ. դեկտեմբերի 11-ը։ Խնդրում ենք դիտարկումներն ու առաջարկություններն ուղարկել mcba@cba.am էլ. հասցեին՝ որպես նամակի թեմա (subject) նշելով «Կրիպտոակտիվների կանոնակարգում», իսկ նամակում՝ Ձեր անուն-ազգանունը, առկայության դեպքում՝ այն կազմակերպությունը, որը ներկայացնում եք, ինչպես նաև կոնտակտային տվյալներ՝ հետադարձ կապի համար։

Ներկայացված դիտարկումներն ու առաջարկությունները կամփոփվեն, իսկ դրանց վերաբերյալ դիրքորոշումները կներկայացվեն շահագրգիռ անձանց։

Հավելված 1

Հավելված 2